ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼԻ
ИЗВЕСТИЯ АРМЯНСКОГО ФИЛИАЛА АКАДЕМИИ НАУК СССР
BULLETIN of the ARMENIAN BRANCH of the ACADEMY of SCIENCES of the USSR

№ 6 (20), 1942

Պրոֆ. Խ. Սամուելյան—«ՀԻՆ ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», Հատոր I։ ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիա—Հայկական Ֆիլիալ. Երևան, 1939 թ., էջ 363.

Պրոֆեսոր Խաչիկ Սամուելյանի վերջին մենագրությունը հայ իրավունքի պատմության մասին՝ լուրջ ուսումնասիրություն է։ Մենագրության մեջ ամփոփված փաստական տվյալները խոշոր նշանակություն ունեն անգամ հայ հին գրականության մի շարք կարևոր պրոբլեմների ճշգրիտ պարզաբանման համար։ Լուսաբանելով հայ ժողովրդի կուլտուրայի կարևոր ճյուղերից մեկը, Սամուելյանը պարզում և բնութագրում է կոնկրետ սոցիալական այն ֆոնը, որի վրա հյուսվել են հեռու անցյալի գաղափարական-մտավոր հոսանքները։ Կասկածից դուրս է, որ հայ իրավունքի պատմությանը նվիրված մենագրությունը կարող է օժանդակել բոլոր այն բանասերներին, որոնք շատ հաճախ, նյութերի և գիտական հետազոտությունների բացակայության հետևանքով, ստիպված են ընդհանուր, մակերեսային և առաձգական ենթադրություններ անել անցյալում իշխող սոցիալական հարաբերությունների մասին։ Իրավական վավերագրերը շատ կարևոր պատմական աղբյուրներ են, սակայն հենց այդ աղբյուրներն էլ ամենից քիչ են ուսումնասիրվել մեզ մոտ։ Եղած ուսումնասիրություններն էլ կրում են միակողմանի բնույթ և շատ հարևանցի կերպով են միայն մոտենում պատմական պրոբլեմների լուսաբանությանը։ Այդ կողմից Սամուելյանի նոր հետազոտությունը կարող է համարվել հազվագյուտ արժեք ունեցող նորույթ։

... «Հին հայ հասարակության իրավական վերնաշենքը,—նկատում է պրոֆ. Սամուելյանը,—լայն ուղիներ է բաց անում պատմագեաի առաջ՝ լուծելու մի շարք պրոբլեմներ Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման պատմության նկատմամբ, որոնք մութ են մնացել կամ անտեսվել են մեր հին ժառանգրության մեջ...» (էջ 7. ընդգծումները մերն են. Ա. Կ.)։

Այդ միանգամայն ճիշտ դիտողությանը կարելի է ավելացնել այն, որ հին ու միջնադարյան հայ գրականության տակավին քիչ լուսաբանված էջերի պարզաբանման համար ևս «իրավական վերնաշենքի» ճշգրիտ բնութագրումը իսկայական նշանակություն ունի։ Օրինակ՝ Թոնդրակյան գրականության, մոռացված հեղինակների, բանաստեղծների, իմաստասերների, կամ էլ լայնածավալ Թոնդրակյան շարժումների ազդեցության ներքո ստեղծված գրականության լուսաբանության համար անհրաժեշտ է ամենից առաջ պարզել տյդ ժամանակաշրջանի սոցիալական հարաբերությունների իսկական պատկերը։ Լաստիվերտցու նկարագրությունը, հայ հին պատմիչների չափազանց թռուցիկ և անկատար ակնարկները, վերջապես առանձին հեղինակների գրական երկերը կամ «նզովքները» (Մագիստրոս, Նարեկացի, Օձնեցի, Անանիա Նարեկացի և այլք) հաղորդում են միմիայն շատ ընդհանուր տվյալներ—գրեթե միշտ տենդենցիոզ և կցկտուր փաստեր։ Այնինչ եկեղեցական ժողովների կանոնները, այլ խոսքով՝ հին օրերի իրավական խտացած նորմաները օժանդակում են թե՛ շարժման սոցիալական բնույթի և թե՛ պատմական զարգացման հիմնական ուղեգծի պարզաբանմանը։ Այդպիսի օրինակներ շատ կարելի է բերել։

Առայժմ լույս է տեսել պրոֆ. Խ. Սամուելյանի մենագրության միայն մի մասը—առաջին հատորը։ Դա բավական ստվար և փաստալից հատոր է՝ բաղկացած երեք հիմնական հատվածներից։ Առաջին հատվածում հեղինակը սեղմ խոսքերով բնութագրում է հայ իրավունքի հետազոտության ընդհանուր վիճակը։ Այդտեղ Սամուելյանն ընդգծում է այն, որ գրեթե բոլոր հին հետազոտություններն էլ կրում են միակողմանի բնույթ։ Մի հիմնական թերություն նշմարելի է բոլոր հին բանասերների մոտ էլ։ Թե՛ պատմագիրները

և թե իրավագետները սովորաբար իրենց հետազոտությունների մեջ ելնում են այն հենակետից, որ «իրավաբանական նորմերն ու իրավական ինստիտուտները ծագում են հենց ինքնին իրավունքից, որպես մարդկային բնության մեջ հավիտյան բովանդակված «արդարության ու հշմարտության» ոգուց»... Երկրորդ հատվածում Սամուելյանը կանգ է առնում հայ իրավունքի աղբյուրների մանրակրկիտ քննության ու բնութագրման վրա։ Այդ հատվածն ամբողջ մենագրության հետաքրքրական մասերից մեկն է։

Այդ տեսության մեջ առանձին արժեք է ներկայացնում հայ սովորութային իրավունքի բնութագրմանը նվիրված գլուխը։ Շեշտելով ազգագրական գրականության շատ հարուստ տվյալների մեծագույն կարևորությունը, Սամուելյանը հրավիրում է իրավագետներին անհրաժեշտ ուշադրությամբ մոտենալ հին սովորույթի գիտական ուսումնասիրությանը։ Նրա այդ դիտողությունը միանգամայն տեղին է, քանի որ հայ բանասերները ամենից քիչ լուսաբանել են հենց սովորութային հայ իրավունքի աղբյուրները։ Միանգամայն ճիշտ է ու տեղին Սամուելյանի դիտողությունը, թե՝ «Հայ ֆոլկլորի գաղափարախոսության և այլաբանական պատկերների մեջ, ընտանեկան և գյուղական նահապետական կենցաղի ծիսական կարգերում որոշ չափով արտացոլվել են հասարակական-արտադրական հարաբերությունները, որոնք կվաններ են տալիս պատկերելու ամբողջ սովորութային իրավունքը...» (ընդգծումը մերն է. Ա. Կ.)։ Այդպիսի հարուստ նյութեր, ինչպես նկատում է Սամուելյանը, շատ կան «մեր հին ու միջնադարյան գրականության մեջ»։ Հետաքրքրական է մենագրության մեջ նաև հայ կանոնական որոշումների տեսությանը նվիրված հատուկ գլուխը։ Այդ որոշումների մասին ժամանակին գրել են մի շարք հայ բանասերներ, որոնք բոլորն էլ նյութին մոտեցել են ազգայնական ակնոցներով զինված։ Նրանք խուսափել են անգամ պարզել եկեղեցական կանոնների սոցիալական բնույթը։ Հակառակ այդ բանասերների միակողմանի և սկզբից մինչև վերջ հակագիտական մեթոդին, Սամուելյանը նորից առաջինն է, որ հիշեցնում է կանոնական որոշումների պատմական էվոլուցիայի և սոցիալական էության ուսումնասիրության կարևորության մասին։

Օտար ռեցեպցիային նվիրված գլուխը մենագրության մեջ, դժբախտաբար, չափազանց սեղմ է ու համառոտ։ Ըստ երևույթին հեղինակը հնարավորություն չի ունեցել մանրակրկիտ կերպով ուսումնասիրելու մի շարք կարևոր ձեռագրեր։ Անցյալում իրավունքի այդօրինակ աղբյուրները, կասկածից դուրս է, շատ կարևոր նշանակություն են ունեցել։ Իր մենագրության մեջ Սամուելյանը կանգ է առնում մասնավորապես Մովսիսական իրավունքի, Ատրա-հռոմեական Դատաստանագրքի և Հռոմեական իրավունքի ռեցեպցիայի վրա։ Նրա դիտողությունները շատ թռուցիկ են, թեև ժամանակին հիշեցնում են մեր բոլոր մասնագետներին, որ հայկական հին ձեռագրերի ուսումնասիրությունն այսուհետև կարող է ու պիտի ընթանա ավելի մեծ թափով։

Մենագրության մեջ ամենահետաքրքրական գլուխներից մեկն է ազգային դատաստանագրքերի քննությանը նվիրված ընդարձակ գլուխը, որն ինքնին արդեն կարող է համարվել առանձին մի ուսումնասիրություն։ Այդ գլխում Սամուելյանը կանգ է առնում Դավիթ Ալավկա որդու Դատաստանագրքի, ապա Մխիթար Գոշի հայտնի Դատաստանագրքի և վերջում էլ Սմբատ Գունդստապլի Դատաստանագրքի վրա։

Աղբյուրների մեջ ուրույն տեղ են գրավում հայ պատմագիրները մի կողմից և վիմական արձանագրությունները մյուս կողմից։ Կարևորագույն այդ աղբյուրների վրա հեղինակը կանգ է առնում առանձին գլխում և, կարծես, թելադրում է մեր իրավագետներին՝ հատուկ ուշադրությամբ մոտենալ անցյալում աննշան չափով գնահատված այդ աղբյուրների քննությանը։

Երրորդ հատվածում Սամուելյանը տալիս է հայ իրավունքի համադրությունը։ Այդ հատվածը բաղկացած է երկու ընդարձակ մասերից։ Առաջին մասում բնութագրվում են հայ իրավունքի պատմական զարգացման էտապները, իսկ երկրորդում խոսվում է հայ պետական ու վարչական իրավունքի մասին։

Որքան էլ հապճեպ ու վիճելի համարվեն Սամուելյանի կողմից առաջադրված մի շարք դիտողությունները հայ իրավունքի զարգացման մասին, այնուամենայնիվ չի կարելի ժխտել, որ նա կարողացել է տալ հիրավի շատ հետաքրքրական, բավանդակալից և այժմեական մի հետազոտություն։

Սկսելով «նախարարական իրավունքից», հեղինակն անցնում է Բագրատունյաց կամ արաբա-բյուզանդական շրջանին և ապա ավարտում է իր տեսությունը՝ բավական ման-

բամասն կանգ առնելով թուրք-օսմանական շրջանի վրա։ Վերջին այդ մասում նա խոսում է սելջուկյան տիրապետության, Կիլիկիայի հայ պետության մեջ գործող իրավունքի մասին։ Յուրաքանչյուր առանձին հատված ունի իր ստորաբաժանումները։ Այսպես, օրինակ՝ նախարարական իրավունքի բնութագրմանը նվիրված մասում խոսվում է վաղագույն ֆեոդալիզմի, Արշակունյաց թագավորության, մարդպանական Հայաստանի, բյուզանդական Հայաստանի, եկեղեցական ֆեոդալիզմի մասին։ Ճիշտ այդպես է կազմված նաև երկրորդ մասը, ուր բնութագրվում են արաբա-բյուզանդական շրջանի իրավական նորմերը։

Այդպես են կառուցված մենագրության բոլոր հատվածները։ Շոշափելով մի շարք պրոբլեմներ, Սամուելյանը հաճախ միայն թռուցիկ կերպով է հիմնավորում իր պաշտպանած դրույթները։ Սակայն այդ թերությունները հանդերձ՝ մենագրության մեջ արձանագրված փաստական տվյալները շատ ուշագրավ են և օժանդակում են հայ իրավունքի պատմական էվոլուցիայի ուսումնասիրության գործին։

Առանձին արժեք են ներկայացնում մանավանդ այն էջերը, ուր խոսվում է հայ ժողովրդի սոցիալական պատմության մասին։ Կանգ առնելով ֆեոդալական հասարակության մեջ իշխող հողային ռենտայի վրա, Սամուելյանն անում է բավական որոշ եզրակացություններ։ Նրա համոզմամբ՝ ֆեոդալական Հայաստանում նույնպես շահագործման սկզբնական ձևը եղել է աշխատապարտ ռենտան։ Փավստոսն ակնարկում է հատկապես խաշարի մասին, այնինչ VII դարի պատմիչների մոտ հիշատակվում են կոռ ու բեկարը։ Հետագայում, հասարակական հարաբերությունների զարգացման ավելի բարձր շրջանում, աշխատապարտ ռենտան վերածվում արդյունավճար ռենտայի։ Հիշեցնելով Մարքսի խոսքերն այն մասին, որ արդյունավճար ռենտան տնտեսական տեսակետից ոչինչ չի փոխում հողային ռենտայի էության մեջ, Սամուելյանը գտնում է, թե՝ «դա բնատուրքն է, որ իսկական արտադրողը վճարում է կալվածատեր-ֆեոդալին նախկին աշխատապարտության փոխարեն»։ Բնորոշ է նաև այն, որ աշխատապարտ ռենտան պահպանում է իր գոյությունն արդյունավճար ռենտային կից։ Սամուելյանի կարծիքով՝ այդ երևույթը «տեսնում ենք անխախտորեն Հայաստանի ֆեոդալիզմի ամբողջ պատմության մեջ»։ Արաբական տիրապետության օրերին, սակայն, առևտրի զարգացման հետ միաժամանակ, «ամուր ոտք է դնում Հայաստանում» դրամական ռենտան։ Ապա կանգ առնելով մատենագրական աղբյուրների վրա, բանասերն ընդգծում է, որ արաբ տիրակալները վերածելով սովորական բնահարկը դրամական հարկի՝ «ստեղծում են տնտեսական «հեղաշրջում» (ընդգծումը մերն է. Ա. Կ.)։ Սակայն դրամական հարկեր (ըստ Սամուելյանի՝ անգամ դրամական ռենտա) եղել են նույնիսկ Աքեմենյան թագավորների շրջանում (Քսենոֆոն—«Կիրոպեդիա», Հերոդոտ)։ Այդ ընդհանուր դիտողություններից հետո բանասերն անցնում է շահագործող խավերի բնութագրմանը։ Ելնելով աղբյուրների մեջ ցրված տվյալներից, նա գտնում է, որ շինականները էլ իրականում եղել են ճորտեր։ Շինական, գեղջուկ, ռամիկ տերմինները—նկատում է նա—չեն բնորոշում ճորտության զանազան կատեգորիաները, քանի որ հայ հին գրականության մեջ «հաճախ հանդիպում ենք շինական տերմինին զուգահեռ կամ հոմանիշ առումով նաև գեղջուկ և ռամիկ բառերին»։ Շինականները ճորտ գյուղացիներն էին, այնինչ ռամիկներ կարող էին լինել նաև քաղաքացիները (ստորադաս խավերից)։ Գյուղացիներ լինելով հանդերձ՝ շինականները եղել են շեն վայրերի—կառուցվածքների, շենների, ավանների ճորտեր։ Վիմական արձանագրությունների մեջ ճորտ և ժողովուրդ տերմինները, Սամուելյանի կարծիքով, հոմանիշ իմաստ ունեն։ Մենագրության մեջ բազմաթիվ ցիտատներ են բերված թե մեր պատմիչներից և թե վիմական արձանագրություններից՝ հատկապես ակնարկված ստուգաբանության հիմնավորման համար։ Հետաքրքրական է Մխիթար Գոշի Դատաստանագրքից հանված այն ցիտատը, ուր ընդգծվում է, թե շինականը չի կարող մտնել ազատների դասը, մինչև որ նախօրոք չստանա տիրոջ կամքն ու համաձայնությունը յուր «ծառայությունից» ազատվելու մասին։ Միևնույնն ավելի կըտրուկ կերպով արտահայտված է XIII և XII դարերի վիմական արձանագրություններում։ Մենագրության կտրուկ այդ թեզի հետ առաջին նվազ դժվար է հաշտվում այն, որ միևնույն շինականներն ունեցել են գույքային սեփականության իրավունք (բացառյալ հողն ու ջուրը) —եղել են ունտա վճարողներ։ Այդ շինականները ենթարկվել են դրամական տուգանքների, ունեցել են արտադրության միջոցներ և նույնիսկ (ըստ պատմիչների վկայության) երբեմն քաղաքական սուր ճգնաժամերին որոշ նշանակություն են ստացել իբրև քաղաքացիներ։ Փավստոսի վկայությամբ՝ շինականների ներկայացուցիչները (դասապետ) մասնակցել են աշխարհաժողովներին։ Հայ պատմիչները, սակայն, բազմաթիվ տվյալներ են հաղորդում շինականների շահագործման մասին և շատ որոշակի կերպով են ակնարկում շինականների

ճորտական կախման մասին։ *Սամուելյանը, ի միջի այլոց, կանգ է առնում Եղիշեի մի դիտողության վրա։ Ցանկանալով բնութագրել Հայաստանում մնացած ազնվական կանանց թըշվառ դրությունը, Եղիշեն դրանց համեմատում է շինականների հետ, անվանելով վերջիններին* «գեղջուկ վշտացեալս» *կամ* «շինական վշտամբերս» (էջ 267)։

Չափազանց հետաքրքրական են այն էջերը, ուր նկարագրված են շինականների սոցիալական շարժումները։ Գրքի այդ մասն էլ մի առանձին էքսկուրս է, լեցուն փաստական հարուստ տվյալներով։ Այստեղ առանձնապես խոսվում է նաև Թոնդրակյան մեծածավալ շարժումների մասին։ Դժբախտաբար բովանդակալից այդ էքսկուրսի մեջ անհրաժեշտ չափով չի պարզաբանված անցյալի ժողովրդական շարժումների բարդ բնույթը։ Եկեղեցական կանոններն ակնարկում են, ի միջի այլոց, ըմբոստ հերետիկոսներին աջակցող իշխանների, բարձրաստիճան հոգևորականների, անգամ «թագավորական տան» ներկայացուցիչների մասին։ Հայտնի են հայ պատմիչների արած հավաստումներն ու դիտողությունները Արշակ Բ-ի քաղաքականության մասին՝ Արշակավանի առթիվ։ Նման տվյալները հիմք են տալիս ենթադրելու, որ միջնադարյան Հայաստանում ես ժողովրդական շարժումները, որպես դասակարգային պայքարի արտահայտություն, հարկավոր է քննարկել երկրի սոցիալական հարաբերությունների ամբողջականության ասպեկտի տակ, հատկապես աչքի առաջ ունենալով կենտրոնացած պետության ձգտող թագավորների քաղաքականությունն ընդդեմ աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների։

Սամուելյանի հետազոտության մեջ կան հատկանշական դիտողություններ նաև ըստրկության մասին։ Հակառակ մի շարք հայ պատմաբանների հայտարարությունների, նա հաստատում է, որ հին Հայաստանում գոյություն է ունեցել ստրկության ինստիտուտը։ Այդ մասին վկայում են մի շարք պատմիչներ։ Կան որոշակի ակնարկներ հայ հին դատաստանագրքերի մեջ։ Սամուելյանի կարծիքով՝ հայ օրինագրքերի առանձին հոդվածները կազմել են նույնիսկ հին հայկական որոշ շրջաններում՝ համապատասխան սովորույթների հիման վրա։ *Նա համոզված է, որ եղել են անգամ «տեղական որոշումներ» ստրուկների վիճակի մասին.*

Ստրկության ինստիտուտը զարգացած էր հատկապես կիլիկյան թագավորության սահմաններում (էջ 301)։ Մենագրության մեջ ընդգծվում է, որ Սմբատ Գունդստաբլի հայտնի Դատաստանագրքի հոդվածներն ստրուկների մասին՝ դաժան *են։ Մխիթար Գոշի Դատաստանագրքի մեջ էլ կան ակնարկներ ստրուկների մասին։ Կիլիկիայում գոյություն ուներ ստրկավաճառություն։ Այստեղ ջենովացիների հետ կնքվում են դաշնագրեր. ուր խոսվում է ստրուկների վաճառքի մասին։*

Ես կանգ չեմ առնում մենագրության այն տողերի վրա, ուր խոսվում է ստրուկների իրավական դրության և հատկապես ստրկության նպաստող աղբյուրների մասին։ Բանասերի հիմնական դրույթն այն մասին, թե Հայաստանում իրապես եղել է ստրկություն, կարելի է միանգամայն հաստատված համարել։ Եղել են ոչ միայն ռազմագերի-ստրուկներ՝ այլև իրենց պարտքերը չվճարող ազատ մարդկանցից ստրուկներ։ Այն հանգամանքը, որ Մխիթար Գոշն իր Դատաստանագրքի մեջ փորձում է սահմանափակել իրենց զավակներին ստրուկներ դարձնող (վաճառքի միջոցով) ծնողների «սովորությունը», ակնառու կերպով ցույց է տալիս, որ ոչ միայն կիլիկյան, այլ նաև հայաբնակ այլ վայրերում ստրկավաճառությունը կապված էր իշխող կարգերի հետ։

Շատ կարճ խոսքերով եմ ես բնութագրում Սամուելյանի աշխատասիրության նշանակությունը։ Կարելի էր կանգ առնել նաև այն էջերի վրա, ուր ակնարկվում է հայ կանանց իրավական կացության մասին։ Սամուելյանը նշում է, որ տիրապետող դասակարգերի կանայք կրել են ժամանակին պատրոն *կամ* պարոն *կոչումները—ցուցաբերել են տիրական իրավունքներ (էջ 247)։ Նա կանգ է առնում հատկապես Հոռոմոսի (1228) վանքի մի արձանագրության վրա և ապա պատմում է վիմական մի շարք ուրիշ արձանագրությունների մասին։ Կանայք վանքերին և եկեղեցիներին նվիրաբերում էին գյուղեր, այգիներ և դրամ—կառուցում էին վանքեր, եկեղեցիներ, կամուրջներ և այլ հասարակական շենքեր։ Անի քաղաքի պարիսպների բուրգերից մի քանիսը անեցի կանայք են կառուցել իրենց միջոցներով։ Չնայած շատ ակնառու այդ տվյալներին, XII դարի այնպիսի մի վավերագիր, ինչպիսին է Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, չի արտացոլում ամենևին միջնադարյան հանրահայտ այդ իրավունքը։ Սամուելյանը գտնում է, որ «Դատաստանագրքի հեղինակն այդ հարցում օգտագործել է հին իրավաբանական աղբյուրները ... և արտացոլել է վաղեմի*

տոհմա-պատրիարքական գերդաստանական կազմի վերապրուկները, երբ կինը գտնվում էր ստորացված. իրավազուրկ գրության մեջ» (էջ 248)։ Ինձ թվում է, որ կարելի է ասել նաև հետևյալը։ Հենվել բացառապես դատաստանագրքերի և կանոնագրքերի իրավաբանական նորմերի վրա չի կարելի. երբ խոսվում է հասարակական բարդ հարաբերությունների մասին։ Եթե վիմական արձանագրությունները միանգամայն նոր լույսով են մեկնաբանում կանանց (թեկուզ և ազնվական կանանց) իրավական կացությունը, ապա կարելի է պնդել, որ այսուհետև նման արձանագրությունները և մանավանդ նյութական կուլտուրայի հուշարձանները ավելի լայն չափով պիտի քննարկվեն հայ կուլտուրայի հին էջերի լուսաբանության համար։ Համառոտ մատենագրական ակնարկի մեջ անհնարին է, իհարկե, կանգ առնել մենագրության մեջ արծարծված բոլոր պրոբլեմների վրա։ Իմ նպատակն էր հիշեցնել, որ հայ իրավունքի պատմության մասին գրված առաջին ամփոփ այդ ուրվագիծը սոսկ «մասնագիտական» մենագրություն չէ, այլ ընթերցողների ամենալայն շրջանների համար էլ արժեքավոր մի գիրք։

Մի դիտողություն միայն թերևս անհրաժեշտ է անել ամբողջ մենագրության մասին։ Ակնարկելով հռոմեական իրավունքի ռեցեպցիայի մասին, Սամուելյանը գրեթե ամենևին կանգ չի առնում հայ հին դատաստանագրքերի տարաօրինակ նպաստող ռեալ գործոնների վրա։ Ելնելով իր համոզմամբ կատարելապես անառարկելի այն թեզից, թե հիշված դատաստանագրքերը եղել են բացառապես ֆեոդալական հասարակության դոկումենտներ և արտացոլել են միմիայն որոշ դասակարգի մտահայեցությունը—աչքաթող է անում մի հանգամանք։ Նա անուշադրության է մատնում այն, որ քաղաքների զարգացման շրջանում առանձին գործիչներ ենթարկվել են քաղաքային կուլտուրայի ազդեցության։ Այդ մասին համենայն դեպս ակնարկում են նյութական և հոգևոր կուլտուրայի բազմաթիվ և բազմազան հուշարձանները։ Եթե այդ այդպես է, ապա ուրեմն կարելի է ենթադրել, որ անգամ «Դատաստանագրքի» նման մի վավերագրի մեջ պիտի նշմարվեն նոր էպոխային հատուկ որոշ էլեմենտներ։ Միթե պատահական է այն, որ հատկապես Գոշի Դատաստանագիրքը տարածվում է հենց որոշ պատմաշրջանում. որոշ շրջանից սկսած էլ առանձին տոն է հաղորդում իրավունքի «ռեցեպցիային»։ Չի՞ թելադրում արդյոք այդ ակնառու հանգամանքը իրավագետներին՝ հատուկ ուշադրությամբ մոտենալ Գոշի Դատաստանագրքի մեջ նշմարվող որոշ օրենքների քննարկմանը և ուսումնասիրությանը։ Շատ հարցեր կարելի է տալ նաև մենագրության մեջ արծարծված ուրիշ պրոբլեմների մի քիչ սխեմատիկ լուսաբանության առթիվ։ Հայ իրավունքի պատմության ուրվագիծն ասպարեզի վրա է դնում անդամ չլուծված կամ շատ քիչ լուսաբանված պատմական պրոբլեմների գիտական լուսաբանության խնդիրը։ Շեշտված «սխեմատիզմն» էլ չի կարող նսեմացնել ժրաջան բանասերի ձեռնարկած խոշոր աշխատանքի մեծ արժեքը։ Այնքան էլ մեծ չէ հայ ժողովրդի սոցիալ-կուլտուրական պատմության մասին գրված հետազոտությունների թիվը։ Ահա թե ինչու հայ կուլտուրայի—գիտության, արվեստի, գրականության զարգացմանը սնունդ տվող պատմա-հասարակական միջավայրի լուսաբանության նվիրված ամեն մի նոր ուսումնասիրություն միշտ կունենա ընթերցողների ամենալայն կոնտինգենտ։ Սամուելյանի գիրքը հենց այդօրինակ գիտական հետազոտության մի փորձ է, որ պիտի համարվի շատ արժեքավոր նորույթ...

ԱՐՏ. ԿԱՐԻՆՅԱՆ